ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ
ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЕ ОЧЕРКИ

ԵՂԻՇԵ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

V դարի հայ մատենագրության, մասնավորապես նրա առաջատար ժանրի՝ պատմագրության (պատմական արձակի) էական յուրահատկություններն իրենց առավել ցայտուն արտահայտությունն են գտել «Ոսկեծղիկն» Եղիշեի (մոտ 410/415—475/480 թթ.) ստեղծագործության մեջ, որը հիրավի, ոչ միայն իր ժամանակի՝ մաշտոցյան դարի, այլև առհասարակ ողջ հայոց հին և միջին դարերի գպրության ամենափայլուն արգասիքներից է։ Եղիշեի մատենագրական ժառանգությունը հսկայական դեր է կատարել հայոց հին պատմագիտական մտքի սկզբնավորման, պատմական արձակի կայուն ավանդների ձևավորման և առհասարակ ազգային գեղարվեստական ոճի մշակման մարզում։ Առանձնապես վիթխարի է եղել Եղիշեի ստեղծագործության դերը հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության սկզբնավորման ու զարգացման գործում, ուր նրա զորեղ ազդեցությունը հարատևել է դարեր շարունակ՝ հասնելով մինչև նոր ժամանակները։

Գոհացուցիչ չեն հեղինակի մասին հավաստի տվյալները։ Մեզ հայտնի տեղեկությունների հիմնական աղբյուրը մի հին ճառընտիրում պահպանված, անանուն հեղինակի ձեռքով հորինված գրավոր ավանդությունն է, որը, հետազոտողների կարծիքով (Մ. Աբեղյան, Ե. Տեր-Մինասյան և ուրիշներ), հիմնված է իրականության վրա, թեև անհնար է ճշտորեն որոշել այդ ավանդության տվյալների հավաստիության աստիճանը։

Ավանդությունը Եղիշեին համարում է Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի կրտսերագույն աշակերտներից մեկը, որին այլ աշակերտների (Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Մամբրե Վերծանող և ուրիշներ) հետ միասին, տեղում համապատասխան պատրաստություն տալուց հետո, ուսման մեջ կատարելագործվելու, գիտություններ և լեզուներ սովորելու և թարգմանական արվեստի մեջ հմտանալու նպատակով իրենց ուսուցիչները 431 թ. Եփեսոսի ժողովից հետո, ինչպես կարծում են, 433 կամ 434 թ. գործուղել են հելլենիստական գիտության և կրթության նշանավոր կենտրոններից մեկը՝ Ալեքսանդրիա քաղաքը։ Հետաղնա ուսման մեկնած աշակերտները հայրենիք են վերադարձել իրենց ուսուցիչների մահից հետո, 441 կամ 442 թ.։

Ի՞նչ հունով է ընթացել Եղիշեի կյանքի հետագա ուղին։ Վերը նշված ավանդության մեջ վկայվում է, որ «Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ զօրավարին, և էր դպրապետ. և տեսող լեալ ամենայն անցիցն, որ անցին ընդ զօրսն Հայոց ի Յաղկերտէ Պարսից արքայէ...»[1]։ Իր իսկ Եղիշեի վկայությամբ նա հայկա-

---

[1] *Քաղվածքը վերցրել ենք Գ. Զարբհանալյանի «Հայկական հին դպրություն (Դ—ԺԳ դար)» գրքից. Վենետիկ, 1897, էջ 334, ծան. № 1։ Տե՛ս նաև Պատմութիւն սրբոյն Եղիշէի վարդապետի.—Սոփերք հայկականք, հ. ԺԱ, Վենետիկ, 1854, էջ 39, ուր ասված է, թե Եղիշեն «...էր զինուորեալ սրբոյն Վարդանայ և սպասաւորէր նմա, և էր հաւատարիմ յամենայն իրս աստուածային և մարդկային»։*

կան գնդի հետ միասին Ապար աշխարհն է մեկնել կամ որպես զինվորական, կամ՝ իբրև հոգևորական։ Այս առթիվ ավելի ընդունելի է թվում Մ. Աբեղյանի ենթադրությունը. «...Քանի որ ըստ ավանդության նա զինվոր է եղել և նրա կրոնավորությունը պատերազմից հետո է եղել, ամենայն հավանականությամբ նա Ապար աշխարհում ծառայել է մի երկու տարի իբրև զինվոր 442—448/449 թվականների միջև»[2]։ Վարդանանց պատերազմի ժամանակ Եղիշեն արդեն հայրենիքում էր և որպես սպարապետի զինվոր ու դպրապետ մասնակցել է նրա գլխավորած ապստամբությանը։ Հատուկ ուշադրության է արժանի, կարծում ենք, Եղիշեի կենսագրության ցարդ մի տեսակ ստվերի մեջ մնացած այս էջը։ Ինչպես երևում է, իր ուսուցչի՝ Մաշտոցի նման Եղիշեն ևս հոգևոր ու մշակութային կյանքին է անցել աշխարհիկ-զինվորական գործունեության բովով անցնելուց հետո։ Մեր այս հեղինակը ևս, հավանաբար, նախ և առաջ կյանքի մարդ է եղել, սրին ու վահանին վարժ մի անձ։ Անհիմն չի լինի կարծել, որ Եղիշեն ևս Մաշտոցի նման սոսկ հետևակ զինվոր չի եղել, այլ, ինչպես երևում է հատկապես նրա մատյանում հանդիպող ռազմամարտերի հմտալից նկարագրություններից, որոշակի ռազմավարական պատրաստություն է ունեցել։

Եղիշեն մասնակցել է Վարդանանց պատերազմին և Ավարայրի ճակատամարտից հետո թողել է աշխարհիկ-զինվորական կյանքը, իրեն նվիրել հոգևորականության և պիտի կարծել՝ վարդապետական ու գրական աշխատանքի։ Այս առթիվ ավանդությունը վկայում է. «Թողեալ զզինուորութիւնն կրօնաւորեցաւ, և բնակէր ճգնութեամբ և խստակրօն վարուք յանապատի. պահոց և աղօթից պարապեալ, խոտաբուծ և դետնախշտի լեալ յաշխարհին Մոկաց...»[4], ապա տեղափոխվում է Ռշտունիք, ուր բնակություն է հաստատում «յայրի միում ի ծովեղերին և նա կոչեցաւ սուրբ Եղիշէի այր»[5]։ Ավանդությունը հաղորդում է, որ Վարդանանց պատերազմի պատմությանը նվիրված երկից բացի նա գրել է նաև «...զդիրս կանոնականս. և զմեկնութիւն խաչելութեանն Քրիստոսի և այլ դիրս օգտակարս»[6], որոնց մեծ մասի՝ Եղիշեի գրչին պատկանելը համարվում է երկայնելի[7]։ Եղիշեի կյանքն ավարտվել է մենության մեջ, Ռշտունյաց աշխարհում։ Նրա աճյունն ամփոփված է Վանա լճի մոտ գտնվող Ջաղար կամ Ջարահան վանքում, ուր երկար ժամանակ պաշտվել է նրա գերեզմանը։

Ոմանք Եղիշեին նույնացրել են նրա երկում հիշված, Արտաշատի ժողովի մասնակից Ամատունյաց Եղիշա եպիսկոպոսի հետ[8], սակայն այս վարկածն անհիմն է համարվել և իրավամբ մերժվել է[9]։

---

2 Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 324։

3 Ինչպես նկատել է Եղիշեի հմուտ հետազոտողներից մեկը՝ Միքայել Փորթուգալը, Եղիշեն «...զորաց մեն մի շարժմունքը, ասոնց եղանակը, պատճառը, նպատակը՝ այնպիսի ճշդությամբ և խելահաս մտոք կնկարագրեն, որքան կրնար սպասվիլ այն ժամանակի զորավարե կամ պատերազմափորձ մատենագրեն մը» (Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և քննադատությունք Միքայել փաշայի Փորթուգալ. Վենետիկ, 1903, էջ 74)։

4 Գ. Ջարբհանալյան. նշվ. աշխ., էջ 334։

5 Սուիերբ Հայկականք. հ. ԺԱ, էջ 42։

6 Գ. Ջարբհանալյան. նշվ. աշխ., էջ 334։ Այս տեղեկությունը հաստատում է Կիրակոս Գանձակեցին. տե՛ս նրա Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 29։

7 Եղիշեի իրական և նրան վերագրված բոլոր գործերն ամփոփված են «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք» հատորում (Վենետիկ, 1859)։

8 Տե՛ս, օր., Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց. հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 310—311 Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784. էջ 73 և այլուր։

9 Տե՛ս Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 57։ Միքայել Փորթուգալ. նշվ. աշխ., էջ 73։ Ե. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 122—123 և այլուր։

Հայ դպրության մեջ Եղիշեի տեղը որոշվում է նրա անմահ ստեղծագործությամբ՝ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկասիրությամբ, որը, ինչպես ցույց է տվել փաստերի բանասիրական հանգամանալից քննությունը (Մ. Աբեղյան, Ե. Տեր-Մինասյան և ուրիշներ), գրվել է Վարդանանց պատերազմից ոչ շատ տարիներ անց, 458—464/465 թթ., Դավիթ Մամիկոնյան երեցի հանձնարարությամբ։ Թե ով է Եղիշեի պատվիրատուն՝ ստույգ հայտնի չէ. ենթադրվում է, որ նա եղել է ժամանակի զարգացած, թերևս նշանավոր մտավորականներից մեկը, որ երևում է Եղիշեի խոսքերից. «Այլ դու,—գրում է հեղինակը,—ո՛վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեսցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն»[10]։

Եղիշեի երկը դեպքերին ականատես հեղինակի գործ է. ինքը՝ հեղինակը, իր գրքում մի քանի անգամ (և այն էլ տարբեր առիթներով) ուղղակի վկայում է իր պատմագրած դեպքերին ականատես լինելը։ Բայց, չնայած ակնհայտ փաստերին, որոշ բանասերների կողմից (Գր. Տեր-Պողոսյան, Գր. Խալաթյանց, Բ. Կյուլեսերյան, Ն. Ադոնց, Ն. Ակինյան) փորձեր արվեցին անհավաստի համարելու այս առթիվ Եղիշեի վկայությունները ու նրան տեղափոխելու VI—VII դդ.։ Այս փորձերը, սակայն, գիտական լուրջ հիմքեր չունեին և մերժվեցին այլ հետազոտողների կողմից[11]։

Քիչ վեճեր չեն ծավալվել (և ցայսօր էլ դրանք երբեմն-երբեմն հրապարակ են գալիս) Եղիշեի Մատյանի և Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» (որի II գրվագի նյութը նույն Վարդանանց պատերազմն է) փոխհարաբերության վերաբերյալ։ Քննարկման առարկա է եղել մասնավորապես այն հարցը, թե դրանցից ո՞րն է որի աղբյուրը, Եղիշեն՝ Փարպեցու, թե՞ ընդհակառակը։ Կարելի է ասել, որ այս խնդիրը բանասիրության մեջ ստացել է իր վերջնական լուծումը։ Անհերքելի փաստերով հաստատված է, որ Փարպեցին իր «Պատմությունը» գրելիս (V դարի վերջ կամ VI դարի սկիզբ) ձեռքի տակ ունեցել է Եղիշեի Մատյանը, օգտվել է նրանից, թեև այդ մասին ինքը չի հիշատակում (հանգամանք, որ ի դեպ, բնավ էլ անսովոր բան չէ միջնադարյան հայ մատենագիրների համար)[12]։

Ինչպես առհասարակ V դարի հայ դասական մատենագրության մյուս երկերի, այնպես էլ առավելապես Եղիշեի ստեղծագործության ժանրային բնութագիրը անհնարին է սպառել որևէ միանշանակ ձևակերպումով։ Այդ անզուգական երկն, իրավ, «ամենից առաջ պատմություն է V դարի մեծ ռազմական գործի» (Մ. Աբեղյան), ականատեսի ձեռքով գրված հավաստի պատմական աղբյուր՝ Վարդանանց պատերազմի իրական եղելությունների հիմնավոր ու տրամաբանված պատճառաբանությամբ։ Հետազոտողի ճշգրիտ բնորոշումով «Եղիշեն ինքը պատմիչ է։ Իբրև այդպիսին՝ նա մեծ վարպետ է և իր

---

10 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 4։ Սույն հրատարակությունից մեջբերումները այսուհետև տալիս ենք տեքստում՝ փակագծում նշելով էջը։ Եղիշեի երկի աշխարհաբար թարգմանիչը նշում է, որ «բնագրի միտքն այստեղ մութն է... թվում է, թե այստեղ Եղիշեն մեծարում է իր մեկենասին՝ ասելով, թե նա այնքան գիտուն անձ է, որ կարող է իր հրամայածից ավելի լավերն արտադրել, և ուրիշները պետք է իրեն դիմեին այդպիսի լավագույն գործերի համար»։ (Եղիշէ. Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևան, 1971, էջ 185, ծան. № 2)։

11 Այս մասին տե՛ս Վ. Հացունի. Խորհրդածությունք Եղիշեի պատմության վերա. Վենետիկ, 1896։ Միքայել Փորթուգալ. Նշվ. աշխ.։ Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, էջ 325—328։ Ե. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 119—208 և այլուր։

12 Ուշացումով մի նոր վարկած էլ առաջ քաշեց Ն. Աղբալյանը, որը թեև այլոց նման Եղիշեին դուրս չդրեց V դարի սահմաններից, բայց դարձյալ առանց որևէ լուրջ փաստարկ բերելու նրա երկը դրեց Փարպեցուց հետո՝ գրված համարելով 490-ից հետո, 495 թ.։

դործին լուրջ վերաբերվող»[13]։ Ի տարբերություն դարի մյուս հեղինակների (Ագաթանգեղոս, Խորենացի, Փավստոս), Եղիշեն մատենագրել է հայ կյանքի ժամանակակից նշանավոր անցքը, բայց այն ընկալել ու մեկնաբանել է պատմական լայն հայեցակետով՝ ժողովրդի քաղաքական կեցության, նրա գոյատևման, նրա ապագայի տեսանկյունով, որպիսի հանգամանքն էլ պայմանավորել է հայոց հին մատենագրության այդ արժեքավոր հուշարձանի պատմափիլիսոփայական հիմնական ելակետն ու նյութի պատմագեղարվեստական իմաստավորման սկզբունքները։ Ընծայականից (որը, ինչպես կարծում են, գրված է երկն ավարտելուց հետո) պարզ երևում է, որ հեղինակը ոչ միայն կանխավ լավ ուսումնասիրել է պատմագրելիք նյութը, այլև լուրջ կշռադատել, խնամքով մշակել է շարադրանքի սկզբունքներն ու սահմանները՝ շարադրանքը բաժանելով երեք հիմնական մասերի՝ համապատասխան ապստամբության նախապատրաստման ու ընթացքի փուլերին։ Առաջին մասում, որ հեղինակը «սկիզբն» է անվանում, մեկնաբանվում են Վարդանանց պատերազմը ծնող պատճառներն ու շարադրվում են Ավարայրի ճակատամարտին նախորդած իրադարձությունները։ Երկրորդ մասը, պատմիչի կողմից «միջոցն» անվանվածը, նվիրված է բուն պատերազմի հանգամանքների և դեպքերի զարգացման կուլմինացիոն կետի՝ Ավարայրի հերոսամարտի նկարագրությանը։ Իսկ երրորդ մասում, որ հեղինակը «զկատարումն» է կոչում, շարահարված են ազատագրական պատերազմի ավարտն ու նրա հետևանքները[14]։ Հենց թեկուզ միայն իրական եղելությունների շարադրանքի այսպիսի պարբերացումը ակնհայտ ապացույց է այն բանի, թե գիտնական պատմիչի ինչպիսի շրջահայեցությամբ ու պատասխանատվությամբ է մերձեցել Եղիշեն իր պատմագրած նյութին։

Երկը բաժանված է յոթ գլուխների, որ Եղիշեն «եղանակներ» է անվանում[15]. կա և լրացուցիչ ութերորդը՝ «Արտաքոյ եւթն եղանակին», որ գրված է, ինչպես կարծում են, երկի հիմնական մասի (7 եղանակների) շարադրանքն ավարտելուց մի քանի տարի անց։ Այստեղ հեղինակը պատմում է «դարձյալ վասն նորին պատերազմին եւ չարչարանաց սուրբ քահանայիցն» (էջ 141)։

Պատմական երևույթները բազմակողմանիորեն գնահատելու (իհարկե, իր ժամանակի չափանիշներով), եղելություններն իրենց ամբողջության ու պատճառակցական կապերի մեջ ընկալելու և մեկնաբանելու, կարևորը երկրորդականից առանձնացնելու զարմանալի հմտություն, փաստերի բուն էությունը բացահայտելու՝ իր ժամանակի համար իրոք բացառիկ խոր պատմափիլիսոփայական հայացք, ահա այն հիմնական հատկանիշները, որ բնութագրում են Եղիշեին՝ որպես հայոց դասական առաջին շրջանի նշանավոր պատմագրի։ Ասենք նաև, որ հիմնականում Եղիշեի (և մասամբ միայն՝ Ղազար Փարպեցու) մատյանի ընձեռած հույժ կարևոր տվյալների շնորհիվ է, որ նոր և մանավանդ նորագույն շրջանի հայ պատմական գիտությունը հնարավորություն ունեցավ ըստ ամենայնի բնութագրելու V դարի կարևոր շրջանի՝ 30—60-ական թթ. հայ հասարակական, սոցիալ-քաղաքական ու կրոնական կյանքի մի շարք էական յուրահատկություններ, հատկապես գիտական հիմնավոր մեկնաբանություն տալու Վարդանանց պատերազմի սոցիալ-քաղաքական դրդապատճառների, այդ պատերազմի բնույթի ու գլխավոր նպատակի՝ ամենևին էլ ոչ դյուրին խնդիրներին։

Սակայն կարևոր պատմական արժեքից բացի Եղիշեի ոսկեղենիկ մատյանը հայոց հին գեղեցիկ գրականության, պատմական արձակի ժանրի ամե-

---

13 Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 329—330։

14 Հմմտ. նույն տեղում, էջ 330—333։

15 Շատ հետաքրքրական է, որ նույն V դարի տարբեր պատմիչների մատյանների հատվածները (գլխաբաժանումները) տարբեր կերպ են հորջորջվում։ Այսպես, եթե Եղիշեի գրքում դրանք «եղանակներ» անունն են կրում, ապա Փավստոսի երկում «դպրություններ», Փարպեցու մատյանում՝ «դրվագներ» են կոչվում, իսկ Խորենացու «Պատմության» հատվածները՝ «գիրք» անունն են կրում։ Թե ինչով պիտի բացատրել այս տարանվանումները՝ դժվար է ասել։

նափայլուն հուշարձաններից է, ճարտասանական բարձր ոճով ու գեղարվեստական բացառիկ շնչով և այրող կրքով կերտված մի զարմանահրաշ ստեղծագործություն, ուր ներդաշնակորեն միահյուսված են գիտությունն ու արվեստը, իրական փաստը և գեղարվեստական հնարանքը։ Ղ. Ալիշանի բնութագրությամբ Եղիշեի ստեղծագործությունը «...թերևս և ամենեն ախորժելի՝ միանգամայն և վայելուչ գրվածն է մեր նախնյաց մատենագրության մեջ...»[16]։ Կարելի է ասել, որ հայոց հին դասական գրականության առաջին շրջանի այդ նշանավոր երկը ժողովրդական վեպի ավանդների ազդեցությամբ հորինված մի իսկական էպոպեա է, անկրկնելի մի դյուցազներգություն, պայմանական բնորոշումով՝ ողբերգական հերոսապատում, որի էպիկական միասնական կառուցվածքում լավագույնս բացահայտված է իրականության և՛ հերոսական, և՛ ողբերգական սկիզբը։ Եղիշեի երկն աչքի է ընկնում էպիկական մասշտաբայնությամբ և ոգեշունչ ու հուզառատ քնարականությամբ, քաղաքացիական վիթխարի լիցքով ու հայրենասիրական վարակիչ պաթոսով։

Եղիշեի մատյանում բավական ընդարձակ տեղ է զբաղեցնում քրիստոնեական կրոնի փառաբանությունը, և նրա մի շարք հատվածներ, իրոք, ջատագովական բնույթ ունեն։ Դա դարի պահանջն էր։ Այս հանգամանքը պայմանավորված էր ժամանակի հայ իրականության ինքնահատկություններով, երբ կրոնի հարցը բացառիկ կարևորություն ուներ։ Խնդիրն այն է, որ հայերի ներծուլման, նրանց պարսկացման գործը դյուրությամբ գլուխ բերելու նպատակով պարսից արքունիքն ու մոգերի դասը՝ մեծ հետևողականությամբ ու բոլոր հնարները գործ դնելով ձգտում էին հայության միջից արմատախիլ անել քրիստոնեությունն ու Հայաստանում տարածել պարսից կրոնը՝ զրադաշտականությունը։ Կրոնի հարցն, այսպիսով, դադարում էր մեկուսի լինելուց, այն ուղղակիորեն առնչվում էր ժողովրդի քաղաքական ճակատագրի, նրա գոյության իսկ բուն պրոբլեմին։ Ահա թե ինչու նոր կրոնի ջատագովությունը այն դարում բացառիկ հրատապություն է ձեռք բերում։ V դարի քաղաքական կրնճռոտ իրադրության պայմաններում մի տեսակ անքակտելի են դառնում «հայրենիք» և «կրոն» հասկացությունները։ Քրիստոնեության պաշտպանությունը դառնում է երկրի ազատության ու անկախության պաշտպանության, ժողովրդի ազգային ինքնության պահպանման մի հզոր միջոց, որ խորապես գիտակցել են ազատագրական մեծ մաքառման դարի նշանավոր գործիչներն ու մտածողները, այդ թվում և Եղիշեն, որը նոր կրոնի պաշտպանության խնդիրը բավական հստակ ընկալել ու մեկնաբանել է ժողովրդի պատմական ճակատագրի հայեցակետով։ Ավելին, նրա երկի սկզբի մի հատվածից պարզ երևում է, որ Եղիշեն, որքան էլ տոգորված է կրոնական մտայնությամբ (միանգամայն բնական բան իր ժամանակի համար), այնուամենայնիվ իրական կյանքի բարդ երևույթներին անդրադառնալիս հանդես է բերում սթափ հայացք՝ կրոնի խնդիրը ենթակայական համարելով, այն ըստ էության կախման մեջ դնելով երկրի ռազմական (ուրեմն և՝ քաղաքական) ներքին ինքնավարությունից։ Խոսելով Վարդանանց պատերազմին նախորդող իրադարձությունների մասին, հեղինակը գրում է, որ երբ պարսից արքան հայոց Արտաշես թագավորին «մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երեվելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից...» (էջ 6)։

Կրոնի հարցում Եղիշեի քաղաքական սթափ դիրքորոշումը լրիվ պարզելու տեսակետից չափազանց ուշագրավ է նաև Հազկերտ II-ի զնդանում նախարարների առերես ուրացության փաստի նկարագրությունն ու այդ փաստին հեղի-

[16] Հ. Ղ. Ալիշան. Հայապատում, էջ 57։

նակի տված մեկնաբանությունը։ Նախ, որոշ իմաստով անսպասելի է թվում, որ այդ իրողությունը Եղիշեն շարադրում է ոչ իրեն հատուկ կրքով, այլ ներկայացնում է որպես մի տեսակ առօրեական փաստ։ Եղիշեն պատմում է, որ Հազկերտի ներքին խորհրդականներից մեկը, որ «ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս», նախարարներին գաղտնի խորհուրդ է տալիս առերես ընդունել պարսից արքայի առաջարկը, որպեսզի առայժմ փրկվեն նրա կապանքներից ու վերադառնան Հայաստան («ուսոյց զխրատ հնարից, զի առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն»)։ Ինչպես պատմում է հեղինակը, բանտարկված նախարարներն աստծուց թողություն են հայցում ակամա գործած մեղքի համար (հավատուրացությունը, առերես թե անկեղծ, ժամանակի ըմբռնումով մեծ մեղք էր համարվում) և առանց երկար տատանվելու անսում են նրա խրատին։ Ահա թե եղելությունն ինչպես է ներկայացնում Եղիշեն. «Իսկ երկիւղածացն Տեառն զայս տեսեալ,—գրում է Եղիշեն,—մեծաւ յուսով աղօթս առնէին և ասէին միաբան. «Դու Տէ՛ր ամենայնի, որ գիտես զծածկեալս սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ամենայն աներևոյթք խորհրդոց, և ոչ ինչ խնդրես վկայութիւն յերևելեացս, որպէս զի և զանգործս մեր տեսանեն աչք քո, արդ առաջի քո հեղումք զխնդրուածս մեր։ Ընկալ, Տէր, զծածկութիւն աղօթից մերոց, և կատարեա զմեզ ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամաչեսցէ չարն, որ խրոխտացեալ մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին։ Շարժեա, Տէր, զկամակոր խորհուրդս նենգաւորին, և խափանեցո զկամս ամբարշտութեան նորա, և դարձո զմեզ խաղաղական խորհրդով անդրէն ի սուրբ եկեղեցին. զի մի՛ յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարաչար ի թշնամեաց»։

«Եւ անձամբ իւրեանց զայս ուխտ եղեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ,—շարունակում է Եղիշեն,—զի հաստատուն կացցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ ի ներքս յղէին զնոյն խրատտուն իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրենութեան նորա» (Հազկերտի—Վ. Ն., էջ 49—50)։

Նախարարների այս աննախադեպ քայլի նպատակը, նրա պատճառաբանությունը Եղիշեն տվել է Վարդան Մամիկոնյանի բերանով, որը Ավարայրի ճակատամարտի նախօրեին հայոց զորքին ուղղված իր դիմում-ճառի մեջ բացեիբաց ասում է հետևյալը. «Մանաւանդ զի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց ի ձէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէն իշխանն (Հազկերտին—Վ. Ն.) խաբեցաք պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան. իբր այն եթէ ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, ո՛րպէս անքակ կացեալ եմք ի նմանէ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք. վասն սիրելեաց մերոց, որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ, զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կռուեսցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն» (էջ 102)։

Այսպիսով, հանուն քաղաքական մեծ նպատակի Եղիշեն փաստորեն ոչ միայն մորթեպաշտություն կամ փոքրոգություն չի սեպում, չի դատապարտում նախարարների հայտնի քայլը (որ, իրոք, անսպասելի բան կարող է թվալ իր ժամանակի ու քրիստոնեական կրոնի նշանավոր ջատագովի համար), այլև ըստ էության արդարացնում է այն՝ գնահատելով որպես հայոց աշխարհի իշխանների դիվանագիտական հաջող քայլ՝ ընդդեմ նենգ թշնամու։

Հազար հինգ հարյուր երեսունհինգ տարի է մեզ բաժանում Տղմուտ գետի ափին տեղի ունեցած և ընդամենը միայն մեկ օր տևող Ավարայրի ճակատամարտից։ Բայց, չնայած դրան, հեռավոր անցյալի այդ անկրկնելի հերոսական դրվագը բացառիկ խոր հետք է ակոսել ժողովրդյան հիշողության մեջ՝ նրա պատմության բոլոր ժամանակներում ընկալվելով որպես ժողովրդի հայրենասիրական մեծ խոյանքների, նրա աննկուն ոգու, քաջության, հայրենիքի, ազգային պատվի ու քրիստոնեական կրոնի պաշտպանության մի անզուգական խորհրդանշան, որով դարեր շարունակ գերվել, ոգեշնչվել են ազատա-

բաղձ հայ քաջորդիների բազում սերունդներ, ողջ մի ժողովուրդ։ Եվ այս գործում, անկասկած, բացառիկ է Ավարայրի հերոսների սխրանքն անմահացնող «Ավարայրի բլբուլի»՝ Եղիշեի ոգեշունչ մատյանի դերը։

Գրքի ընծայականում իր պատվիրատուին ուղղված խոսքերում (որոնք միաժամանակ, ըստ էության, հասցեագրված են գալիք սերունդներին) հեղինակն, ասես, հուշել, կանխատեսել է իր գրքի ճանապարհը. «...զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն...» (էջ 4)։ Հենց այստեղ էլ, ընծայականում հեղինակն իր մատյանը համարում է «մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան...» (էջ 4—5)։ Ահա հենց սա էլ պայմանավորել է Եղիշեի ստեղծագործության հիմնական միտումն ու նյութի պատմագեղարվեստական կերպավորման յուրահատկությունները։ Առանձնապես ուշագրավ է, որ այդ ստեղծագործության մեջ ողբերգական հնչերանգի հետ միասին, նույն վիթխարի ուժով հնչում է ոչ միայն հույսի, մխիթարության, այլև, որ առավել կարևոր է, հոժարակամ «մահվան վրա հարձակվողներին» ուղղված քաջալերանքի մարտական խրոխտ կոչը։ Եվ սա բացառիկ կարևորություն ունի ողջ ստեղծագործության գաղափարական միտվածքն ըստ ամենայնի գնահատելու առումով։ Իզուր չէ, որ զորեղ թշնամու դեմ հանուն արդար կռվի ելած հայ քաջորդիների նահատակությունը Եղիշեն իմաստավորում է հներից փոխառյալ «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» խորիմաստ աֆորիզմով։

Եղիշեի ստեղծագործությունը միասնական պլանով կերտված մի միաձույլ ամբողջություն է՝ գլխավոր առանցք ունենալով հայրենիքի և ժողովրդի ազատության ու անկախության և քրիստոնեական հավատի պաշտպանության գաղափարը, որի մեջ է որոնում հեղինակը գեղեցիկի իդեալը։

Կռահելով պարսից արքունիքի հեռուն գնացող նպատակը, Արտաշատի ժողովը վճռաբար մերժում է հավատափոխության առաջարկը, միաժամանակ դրա մեջ տեսնելով, անկասկած, վերջնական ստրկացման, ազգային ինքնության կորստի իրական վտանգը։ Հայերն իրենց մերժողական պատասխանի մեջ գրում են. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ՝ խախտել, ո՛չ հրեշտակք, և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ և են դառն հարուածք» (էջ 40)։ Հայերի՝ պարսիկների բռնադատմանը չենթարկվելու կամքն ու վճռականությունն առավել համոզիչ ներկայացնելու նպատակով Եղիշեն դիմել է հետաքրքիր գեղարվեստական միջոցի՝ վիճակը ներկայացնելով պարսիկ մոգպետի բերանով (որին հենց Հազկերտը Հայաստան էր ուղարկել ժողովրդի հավատափոխության գործը գլուխ բերելու)։ Անգղի հայտնի դեպքերից հետո մոգպետն ասում է. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողցէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ ինքեանք աստուածքն եկեսցեն մեզ լոգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն... Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի ստացուածոց պատկառին, և որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել» (էջ 59)։ Այստեղ գեղարվեստական հնարանքը միանգամայն արդարացրել է իրեն՝ հեղինակային գաղափարը բացարձակ համոզիչ ներկայացնելու առումով. իսկապես, եթե նրը, մոգպետն է այդ համոզմանը եկել, ապա կարելի՞ է այլևս կասկածել հայերի վճռականության ու հաստատակամության վրա։

Հատուկ ուշադրության է արժանի այն պարագան, որ ազատագրական մաքառման ամենածանր պահին, երբ վճռվում էր հայրենիքի, իր իսկ ժողովրդի գոյության, նրա լինել-չլինելու ճակատագրական խնդիրը, ամեն ինչ, անգամ դարի առաջադեմ մտածողների կրոնական համոզմունքներն ի սպաս են դրվում դրան։ Այդ մտածողները, առաջնորդվելով ազգի քաղաքական շահերով, առաջ են քաշում սկզբունքներ, որոնք ոչ միայն չեն համընկնում կրոնական դոգմային, այլև ըստ էության դեմընթաց են դրան։ Այս առումով չափազանց հետաքրքրական է դարի խոշորագույն մտածողներից մեկի՝ Եզնիկ Կողբացու

քննադատական վերաբերմունքը ֆատալիզմի նկատմամբ, որով նա ոչ միայն ժխտում է հին հեթանոսական հավատը, այլև փաստորեն մերժում է նաև «մի՛ կալ հակառակ չարին» հայտնի քրիստոնեական դոգման։ Մեջ բերենք Եղնիկի «Եղծ աղանդոց» փիլիսոփայական-աստվածաբանական տրակտատի (որը, ինչպես հայտնի է, գրված է հենց Վարդանանց պատերազմի նախօրյակին, և պետք է գիտվի հայերի ազատագրական ապստամբության գաղափարական նախապատրաստության մի կարևոր օղակը) այն հատվածը, ուր հեղինակը քննադատում է ճակատագրի հավատքը, որով, ինչպես մտածում է հեղինակը, կարելի է արդարացնել ամեն մի չարիք՝ ի վերուստ սահմանված հայտարարելով այն[17]. «Եւ ո՞ւր իցէ այն,—գրում է Եղնիկը,—զոր ասենն, եթէ որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն գրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ. և ուր հրամանքն իցեն և յումմէ հրամանքն, ըստ այնմ և մեռանին. և վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն։ Ո՞ հրաման տկար, և անզօր սահման, զորև գողքն և աւազակքն կարեն խախտել, յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն յընչից և յարևէ արկանիցեն»։ Եվ ապա խոսքին հեգնական երանգ տալով, հեղինակը շարունակում է. «Եւ եթէ ի սահմանելոյ ինչ հրամանէ իրքն գործիցին, չէ պարտ՝ ոչ թագաւորաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն. որք ցպատուհասն ի վերայ ածելով յայտ առնեն՝ թէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանացն եղանէն մեղքն մեղանչականացն, այլ ի բռնաւորութենէ չարագործութեանն։ Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ՝ տեռազերծ առնել և կոտորել զմարդիկ, մի՛ զօրս ժողովեսցեն, և մի՛ գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ. այլ իրաւունս տացեն՝ թէ հրամանք են աշխարհին ի հինէ կոտորել, մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն. այլ գումարելով զզօրսն և հանելով զթշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին, այլ ի բռնաւորութենէ հինին՝ որ եկեալ ժլատութեամբ կոտորէ զաշխարհ, և մերկանայ յընչից և յստացուածոց»[18]։ Դարի հայ իրականության, ազատագրական մեծ կռվի պահանջով է ծնվել, անշուշտ, նշանավոր փիլիսոփայի կարևոր դիրքորոշումը, ըստ որի՝ «որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ զիւր աշակերտսն թեքել, առ ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախոյանից, և առաքիցէ զնոսա ի հրահանգս մրցել ընդ ախոյանսն, և յաղթութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչև զկեանս անդամ արհամարհել. գի լաւ համարի թէ վասն անուան բարիոք մեռանիցին, քան թէ կենդանի կայցեն և վատանուն լինիցին»[19]։ Հենց նույն գաղափարն է ընկած ազատագրական կռիվը փառաբանող V դարի մեր դասական հեղինակների երկերի, այդ թվում և Վարդանանց հերոսական սխրանքն անմահացնող Եղիշեի ստեղծագործության հիմքում։

Եղիշեի մատյանի գաղափարական բովանդակության հարցերին անդրադառնալիս ուշադրություն է գրավում հեղինակի ջերմ համակրական վերաբերմունքն առ «գեղջուկն վշտացեալ», նրա խոր հավատը՝ ռամիկ ժողովրդի ուժի, նրա բարոյահոգեբանական ու ռազմաֆիզիկական անսպառ կարողությունների նկատմամբ։ Հեղինակն, իհարկե, պատշաճն է մատուցում պատմական նշանավոր անձերի, ապստամբության ղեկավարների հայրենանվեր վաստակին, բայց նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ստեղծագործությունը մի հրաշալի ներբող է ժողովրդյան համընդհանուր հերոսության, նրա տարերային հզոր պոռթկումի, որ այնպես փայլուն կերպով պատկերված է երկի մի քանի հատվածներում, մասնավորապես Անգղի դեպքերի նկարագրության մեջ։ Թվում է, թե ամենից առաջ հենց այստեղ է որոնել հեղինակը գեղեցիկի իդեալը, ժողովրդի գոյատևման, նրա հավերժության հուսատու գրա-

---

17 Հմմտ. Եղնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի. Երևան, 1970, էջ 16։

18 Եղնկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, էջ 112—113։

19 Նույն տեղում, էջ 40։

վականը։ Մեծ խորհուրդ ունեն Եղիշեի խոսքերը. «Ոչ երևէր այնուհետև առաւել տէր քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ ոք քան զոք նուազեալ ի յարութենէ։ Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս։ Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան և զմի ագան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի. միով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կանայք» (էջ 67)[20]։

Այս հանգամանքը մի էական չափով պայմանավորել է Եղիշեի ստեղծագործության՝ որպես դյուցազներգության, գաղափարական բովանդակության և ժանրային դիմապատկերի յուրահատկությունները։

Եղիշեն բացառիկ նշանակություն է տալիս ազգի ուժերի միասնությանը՝ այն համարելով հաղթանակի կարևոր նախապայմանը։ Այս առումով հայերի անհաջողության հեղինակային պատճառաբանության մեջ ուշագրավ է մի կետ. դրա գլխավոր պատճառը հեղինակը համարում է ոչ թե ժողովրդի կամ զորավարների քաջության ու անձնազոհության պակասը, այլ՝ իշխանների անմիաբանությունը, որոնք հանուն երկրի ընդհանուր շահի չեն կարողանում մի կողմ դնել անձնականը։ Հենց Վասակի օրինակով Եղիշեն ցույց է տալիս, թե պատմությունն ինչպիսի՞ դաժանությամբ է վրեժ լուծում միաբանության պառակտիչներից։

«Արդ յայսմ հետէ և անդր,—գրում է Եղիշեն,—ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձընտիրք լինելով՝ յոյժ բաղմանայ լալումն ողբոյս։ Քանզի հատեալ անկան անդամքն, որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոյս էին, դառնայ մարդ յարտասուս առաջի մերձակայ դիականն. եւս առաւել լնու դառնութեամբ ի վերայ այնորիկ, որ յոգի և ի մարմին առ հասարակ դիականայ։ Եւ եթէ ի վերայ միոյ անձին այսպէս, ո՞րչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոջ» (էջ 89—90)։ Ահա Եղիշեի՝ պատմության փիլիսոփայության մի կարևոր առաջադրությունը։ Նկատենք նաև, որ Եղիշեի մոտեցումը չի սահմանափակվում ազգային շրջանակներով, այն ձեռք է բերում իսկական համամարդկային հնչեղություն։ Վերը բերվածից հետո Եղիշեն հարում է. «Այլ յայսմ տեղւոջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումնս մեր, այլ ի վերայ ազգաց և աշխարհաց...» (էջ 90)։

Եղիշեի ստեղծագործության առանցքային գաղափարն է հայրենասիրությունը, որ նա գնահատում է որպես մարդկային մեծագույն առաքինություն։ Հեղինակի հայրենասիրական իդեալների կենդանի մարմնացումներն են Վարդան Մամիկոնյանը, Ղևոնդ երեցը, ազատագրական կռվի մյուս ղեկավարները, որոնց համար, ինչպես իրական եղելությունների վարպետ նկարագրությունների միջոցով ցույց է տալիս հեղինակը, հայրենասիրությունը ոչ միայն քաղաքացիական պարտք է, այլև՝ իսկական համոզմունք։ Իսկապես, որքա՞ն ազնիվ կիրք, քաղաքացիական ոգու արիություն, հասարակաց շահի խոր գիտակցում, հայրենիքին ու հավատին անսահման նվիրվածություն կա Ավարայրի ճակատամարտի նախօրեին հայոց զորքին ուղղված Վարդանի դիմումճառի մեջ. «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ,—ասում է նա,—և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք... Որ փախչէր, վատանուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր... Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յոր-

[20] Բնորոշ է, որ հեղինակը առհասարակ մեծագույն հաճույքով է նշում ազատագրական կռվի հերոսամարտերին առնական կանանց մասնակցությունը։ Անգրի իրադարձությունները նկարագրելիս Եղիշեն հատուկ շեշտում է. «...երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդմէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլև կանանց առնականաց» (էջ 57—58)։

ժամ ձերով կամօք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց։ Մի՛ երկուացեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի գթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք։ ...Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց» (էջ 100—104)։

Նույն մարտաշունչ ոգին է հնչում Ղևոնդ երեցի խոսքերում. «...եղբարք, մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ գան ի վերայ մեր։ Մեր յոյսն մեզ կրկին երևի, եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան» (էջ 109—110)։

Փառաբանելով հայրենասիրությունը, մարդկային ամենաերևելի հատկություն սեպելով այն, Եղիշեն միաժամանակ գեղարվեստական խոսքի նույն վիթխարի զորությամբ շիկացած երկաթով խարանում, անարգանքի սյունին է դամում հայրենիքին դավաճանությունն ու հավատուրացությունը, իր խոսքով ասած՝ «զլետս կացելոցն զվատթարութիւն»։ Այս առումով Եղիշեի մոտ առանձնապես ուժեղ է ստացվել հայրենադավ, ազգուրաց Վասակ Սյունու կերպարը, հատկապես՝ նրա անփառունակ վախճանի արտահայտիչ ու կրքոտ նկարագրությունը, որը միաժամանակ փաստորեն մի խոր գեղարվեստական ընդհանրացում է։ Այն, իսկապես, հեղինակի շուրթերին հնչում է որպես մի դաժան, բայց արդար դատավճիռ առհասարակ հայրենիքի դավաճանների նկատմամբ։

Վասակի կործանման քստմնեցուցիչ պատկերը տալուց հետո Եղիշեն արդար դայրույթով հարում է. «Եւ այն որ կամերն թագաւոր լինել մեղօք Հայոց աշխարհին, ոչ երեւեցան տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց. և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ զոր այս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա» (էջ 140)։

Եղիշեի երկի այս և հարանման հատվածներում մեկ անգամ ևս ուղղակիորեն ընդգծված է նրա ստեղծագործության մի կարևոր հատկանիշը՝ խրատաբարոյախոսական բացահայտ միտումը, որ առհասարակ բնորոշ է մաշտոցյան դարի դասական մատենագրության նշանավոր հուշարձաններին, բայց առանձնապես շեշտված է Եղիշեի մատյանում։ Ավելորդ չի լինի հիշել, որ Եղիշեից հետո «Վասակ» անունը դարձավ հոմանիշ «ազգուրաց», «ազգադավ», «դավաճան» հասկացություններին։

Եղիշեին միանգամայն օտար է պասսիվ հայեցողականությունը։ Նրա գրքի սկզբից մինչև վերջ ամենուրեք բացահայտ երևում է իր անկեղծ համոզմունքները, իր որոշակի համակրություններն ու հակակրություններն ունեցող հեղինակը՝ իր կրքոտ վերաբերմունքով նկարագրված անցքերի ու պատմական անձերի վարքագծի նկատմամբ, որով ևս նրա բովանդակալից հորինվածքը միաժամանակ ձեռք է բերում ներազդելու հզոր ուժ, կրքեր ու զգացմունքներ բորբոքելու վիթխարի կարողություն։ Դրան յուրովի նպաստում են նաև երկում հաճախ հանդիպող հեղինակային շեղումները, որոնք թեև երբեմն որոշ չափով դանդաղեցնում են դեպքերի շարադրման ընթացքը, բայց մյուս կողմից լավագույնս օգնում են հեղինակային կոնցեպցիայի ավելի հստակ ու խոր բացահայտմանը։

Եղիշեն հերոսների բնութագրության մեծ վարպետ է. հաճախ նրա նախընտրած մեկ կամ երկու մակդիրը միանգամայն դիպուկ բնորոշում է տվյալ անձի էությունը, ինչպես, օրինակ, արին Վարդան, առաքինի զորավարն, յառաջադէմ Գարեգին, արդարն Արսեն և այլն[21]։ Հապա որքան տարողունակ ու արտահայտիչ են պարսից արքայի գլխավոր խորհրդատու, հազարապետ Միհրներսեհին հատկացված «ծերն դառնացեալ», «հին վիշապն չարաբոյն», կամ Հազկերտին բնորոշող «չարադև լի ամենայն դառնութեամբ», «դառնացեալ քան զլեղի թագաւոր» և նման բնութագրությունները։ Սակայն Եղիշեն չի բավարարվում պատմական անձերի ստատիկ բնութագրություններով, այլ ջանում է նրանց էությունը առավել ամբողջական բացահայտել կոնկրետ իրադարձությունների նկարագրությունների մեջ, հանգամանք, որ լավագույնս նպաստում է պատմական անձերի կենդանի պատկերմանը, նրանց անհատականացմանը (իհարկե, ժամանակի գեղագիտական ըմբռնումների չափանիշներով)։ Եղիշեի երկի հերոսներից մի քանիսը, իրոք, իրարամերժ հատկանիշների բևեռացման միջոցով կերտված (դա ևս համապատասխանում էր գարի գեղագիտական ըմբռնումներին) ամբողջական գեղարվեստական կերպարներ են կամ մոտենում են այդպիսի կերպարներին (Վարդան, Ղևոնդ, Վասակ, Հազկերտ, Միհրներսեհ, Դենշապուհ)։

Եղիշեի ստեղծագործությունն աչքի է ընկնում առինքնող ու վարակիչ անմիջականությամբ, անկաշառ անկեղծությամբ, որով հեղինակին հաջողվում է միանգամից գերել ընթերցողին, դարձնել իր նկարագրած իրադարձությունների կենդանի վկան, նրան ստիպելով իր հետ միասին ոգևորվել, փառաբանել, զայրանալ, դատափետել ու ատել... Սա է, ահա, իսկական արվեստի ուժը[22]։

Եղիշեի երկը վկայում է հեղինակի յուրատիպ գեղարվեստական տաղանդի ու գեղագիտական բացառիկ նուրբ ճաշակի մասին. նա հրաշալի տիրապետում է ճարտասանական արվեստի գաղտնիքներին ու վարպետորեն օգտվում դրա հնարանքներից։

Հարուստ ու բազմազան է Եղիշեի պոետիկան. պատկերավոր համեմատություններ ու դիպուկ, հաճախ անսպասելի փոխակերպություններ, ճարտասանական հարց և հակաթեզ, կենդանի երկխոսություններ ու ճառեր, զանազան նամակներ ու պաշտոնական անձանց գրություններ և այլն։

Եղիշեի հյուսվածքին ավելի շատ բնութագրական է էքսպրեսիվ ոճը, որի շնորհիվ նրա շատ նկարագրություններ կենդանի և գունեղ պատկերներ են հիշեցնում։

Եղիշեի նախասիրած հնարանքներից է ճարտասանական հարցը, ավելի ստույգ՝ երանգային բազմազանությամբ հատկանշվող ճարտասանական հարցերի տարափը, որ հորդում է ինչպես հեղեղ՝ վիթխարի հուզական շունչ հաղորդելով հյուսվածքին, բազմապատկելով հեղինակային խոսքի ազդեցությունն ընթերցողի վրա։ Հիշենք, օրինակ, Հազկերտին վերաբերող հետևյալ հատվածը. «Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չշիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ զէշաքարշ արարեալ իբրև զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ» (էջ 8)։

Մտքի ուժեղացմանը լավագույնս նպաստում, արտակարգ ներքին լարվածություն է հաղորդում հռետորական հարցի ու հակաթեզի խառը, զուգադիր օգտագործումը, որի մի բնորոշ օրինակ կարող են համարվել հանդիմանության այն խոսքերը, որ պարսկական բանակում գտնվող քրիստոնյաները ուղղում են Հազկերտի գնդանում քրիստոնեությունից հրաժարված նախարարներին (հանդիմանողները տեղյակ չեն ուրացության առերես լինելուն)։ Մի կտոր մեջ բերենք երկի համապատասխան հատվածից. «Վարդապետք էիք

21 Հմմտ. Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 339։

22 Նույն տեղում, էջ 336։

առաքելական քարոզութեանն. արդ աշակերտք լինիցիք մոլար խաբէութեանն։ Ուսուցիչք էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խաբէութիւն մոգաց։ Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուա՞ծս խոստովանիք։ Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զսուտն ստագո՞յնք լինիցիք։ Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճի՞ւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճե՞ր զոհից և ի շարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք։ Տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւա՞ց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութիւնէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաբար արեգակա՞ն կաքաւիցէք։ Ժառանգք էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք ժառանգ գեհենին։ Նոցա՛ է սպառնացեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք. նոցա՛ պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին նոցա՛ թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք՝ ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար։ Նոքա ի վաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զիա՞րդ զկնի կուրացն կուրացարուք։ Նոցա՛ էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն։ Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն որ չիք ուրեք ի միջի և ոչ մի։ Թեթևացեալք ի ծանր բեռանց՝ անձամբ անձին առէք զբեռն ծանրութեան. ազատեալք ի ծառայութենէ՝ շարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն» (էջ 55—56)։

Եղիշեին բնորոշ է պատմելաոճի հոգնասեռությունը, ավելի ստույգ՝ տարբեր պատմելաոճերի ներդաշնակ զուգակցումը։ Նայած շարադրած նյութի բնույթին, հեղինակի հյուսվածքը մեկ ստանում է քնարական նրբերանգ, մեկ՝ էպիկական բուռն թափ։ Հեղինակի պատմագրած նյութին, իհարկե, առավելապես ներդաշնակում է էպիկական բարձր ոճը, որ իր դրսևորումն է ստացել մատյանի տարբեր դրվագներում, հատկապես՝ ռազմամարտերի նկարագրության մեջ, ուր հեղինակի վրա առանձնապես զգալի է ժողովրդական էպոսի ոճական ազդեցությունը։ Դրա փայլուն օրինակն է Ավարայրի ճակատամարտի կառուցիկ պատկերը, ուր, ի դեպ, միաժամանակ դրսևորվել են Եղիշե մարտիկի ռազմավարական գիտելիքները։ Հեղինակի պատմողական արվեստի մասին գաղափար տալու համար մեջ բերենք որոշ հատվածներ այդ ճակատամարտի նկարագրությունից. «Կարգէր և կազմէր (Վարդանը—Վ. Ն.) զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն։ Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին և Ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլուն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նա և ի բաղում շողալ սուսերացն և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային։ Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանցն երկոցունց կողմանցն՝ առ՝ յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին։ Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան։ Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս բախեալք ընդ միմեանս, երկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային։ Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի ձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զաջ թևն Պարսից գնդին բեկեալ՝ սրկանէր զգազանօքն (մարտական փղերին—Վ. Ն.), և շրջան առեալ կոտորէր

մինչև ի նոյն տեղի։ Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային։... Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց։ Եւ որք մնացեալք էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միաբանգամ զմիմանս սատակէին։ Եւ մինչև իսկ ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն»։ Եվ ապա հեղինակը հիշեցնում է. «Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեացն, զաշխարումն մերձաւորացն, զվայ և զաւաղ բարեկամացն» (էջ 116—119)։

Եղիշեն ճակատամարտի նկարագրությունն ավարտում է աֆորիստական մի նախադասությամբ, որը, ինչպես հաստատում են Ավարայրին հաջորդած իրադարձությունները, միանգամայն ճիշտ է բնութագրում հայերին թվով երեք անգամ գերազանցող պարսից հսկայաթիվ բանակի դեմ ապստամբների վարած այդ ծանր ճակատամարտի իրական ելքը. «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ,—գրում է պատմիչը,—այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան» (էջ 119)։

Այս խոսքերն, ի դեպ, վկայում են այն մասին, որ թեև Եղիշեն ամբողջովին տարված է հայրենասիրության գաղափարով, այնուամենայնիվ դա նրա մեջ չի ծնում այլ ազգերի նկատմամբ ազգային անհանդուրժողականության ու գերազանցության զգացում, նա ի զորու է ըստ արժանվույն գնահատելու անգամ թշնամու արժանիքները («...քաջք ընդ քաջս ելեալ...), մի հանգամանք, որ վկայում է հայ հեղինակի բարոյական ու քաղաքացիական բարձր նկարագրի մասին։

Որքան էլ Եղիշեն, պատմագրելով ողբերգական իրադարձությունները, ցավում, ողբում է տեղի ունեցածի առթիվ, այնուամենայնիվ նա ողբասաց չի դառնում, երբեք չի կորցնում գալիքի հույսն ու հեռանկարը, նրան օտար են մնում վհատությունն ու վատատեսությունը։ Արյունով ու արցունքով ողողված նրա նկարագրությունների վրա մի տեսակ ասես թևածում է ներքին լավատեսական համոզմունքը, պատմական հեռանկարի հաստատման խոր գիտակցությունը։ Չնայած հայերի կրած անդառնալի կորուստներին, հեղինակին այնքան սիրելի քաջ այրերի՝ Վարդանի ու Վարդանանց կործանմանը, հեղինակը մի ներքին արդար մղումով հավատում է բարու և ճշմարտի վերջնական հաղթանակին։ Հենց այս հանգամանքն էլ պայմանավորել է Եղիշեի ստեղծագործության լավատեսական ոգին, որի հիմքը դարձյալ հեղինակի խորապես գիտակցված հավատն է հայրենի ժողովրդի բարոյահոգեբանական ու մարտական անսպառ կարողությունների նկատմամբ։ Այս առումով, թվում է, թե առանձնակի մեծ խորհուրդ ունի Եղիշեի մատյանի խորհրդանշական ավարտը, ուր քնարական վարակիչ շնչով փառաբանվում է բազում զրկանքներ համբերությամբ ու հերոսաբար տարած «հայոց աշխարհի փափկասուն տիկնանց» հոգեկան մեծ ուժն ու բացառիկ տոկունությունը։ Երկի այդ հատվածն ինքնին մի փառահեղ հիմն է մարդկային ոգու անպարտելիության, նրա մեծագույն առաքինությունների. «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրդեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք երէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենե-

վին զսովորական փափկութիւնն։ Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք։ ...Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա։ ...Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարկելեացն (խոսքը նրանց գերեվարված ամուսիններին է վերաբերում—Վ. Ն.)։ Մատամբ իւրեանց վաստակեցին և կերակրեցան...։ Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտեցան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա... Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՞րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն» (էջ 201—203)։

Մարդկային ոգու անընկճելիության մոտիվը հեղինակը յուրովի զարգացրել է նաև երկի վկայաբանական-վարքագրական բնավորություն ունեցող հատվածներում, ուր նույն կրքով ու հուզականությամբ պատմվում է ազատագրական կռվին զինվորագրված հոգևոր դասի մարդկանց անթեքելի վարքագծի մասին, որոնք Ավարայրից հետո էլ, չնայած պարսիկներից կրած անասելի տառապանքներին ու ահավոր տանջանքներին, վերստին շարունակում են հավատարիմ մնալ իրենց կրոնաբարոյական համոզմունքներին։ Այստեղ Եղիշեն, անկասկած, ազդվել է ժամանակին ժողովրդի մեջ շատ սիրված ու տարածված վկայաբանական զրույցներից, որոնք իրենց բովանդակությամբ և մասնավորապես վկաների ուժեղ կերպարներով լավագույնս ներդաշնակում էին հեղինակի քրիստոնեական իդեալին։ Եկեղեցական դասի մարդկանց հոգևոր քաջությունը հեղինակն ընկալում ու մեկնաբանում է որպես դարի հերոսական ոգու մի ինքնօրինակ դրսևորում։ Եղիշեի գրքի այս հատվածները արվեստի տեսակետից ևս շատ հետաքրքրական են, ուր հեղինակը վարպետորեն օգտագործել է սրբախոսական ժանրերի գրվածքներին հատկանշական գեղարվեստական հնարանքներն ու արտահայտչամիջոցները, ինչպես ասենք գործողությունը երկխոսության միջոցով առաջ տանելու հնարանքը, որով յուրատեսակ աշխուժություն է հաղորդվում հյուսվածքին, և այն տեղ-տեղ թատերական գործողություն է հիշեցնում։

Եղիշեի երկում հաճախ ենք հանդիպում ճառերի, որ այս կամ այն առիթով, ըստ պատշաճի արտասանում են պատմական անձերը[23]։ Գեղարվեստական այս հնարանքը (որին, Եղիշեից բացի, դիմել են նաև մաշտոցյան դարի մեր մյուս հեղինակները) գալիս է անշուշտ անտիկ պատմագրությունից, ուր, ինչպես հայտնի է, ճառը համարվում էր պատմական երկի ավանդական, նույնիսկ պարտադիր տարրը։ Ոճական առումով երբեմն բավականին բարդ (հատկապես ջատագովական բնույթի) և բազմատեսակ (ուղղակի, անուղղակի, կոլեկտիվ, անանուն) ճառերը Եղիշեի ստեղծագործության մեջ ինքնակա արժեք չունեն, այլ օրգանապես ձուլված են շարադրանքի ընդհանուր հենքին։ Դեռևս Թուկիդիդեսը գրել է. «Ճառերը ես կազմել եմ այնպես, որ միշտ հարմարվելով տվյալ պահի հանգամանքներին, իմ կարծիքով ամեն մի հռետոր ավելի շուտ կարող էր ասել իրերի իսկական դրության մասին, ընդ որում ես հետևել եմ

---

23 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր՝ Поэтика Егишэ.— Литературная Армения, 1972, № 7.

հնարավորին չափ մոտ լինել իսկապես ասվածի ընդհանուր մտքին»[24]։ Միանգամայն պարզ է, որ Եղիշեի ստեղծագործության մեջ բերված ճառերն էլ հեղինակի ստեղծածն են, ուրեմն և՝ պատմական առումով վավերական չեն և ավելի արժեք ունեն թերևս արվեստի հայեցակետով։ Դրանք, այդ ճառերը, ոչ միայն նպաստում են հերոսների բնական բնութագրությանը, այլև հեղինակի զգացմունքների դրսևորմանը և որ ավելի կարևոր է՝ ծառայում են հեղինակի մտքերը պարզաբանելուն, երևույթների ներքին էությունը բացահայտելուն։ Օգտվելով Հիպպոլիտ Տենի մի բնորոշումից, ասենք, որ այդ ճառերի միջոցով սեփական գաղափարների, իր իդեալի արտահայտման հետ միասին հեղինակը կարողանում է որոշակի նունով ուղղել, ղեկավարել պատմական անձանց կրքերը։

Եղիշեի երկում զետեղված ճառերը վկայում են հեղինակի հռետորական անուրանալի տաղանդի մասին։ Այդ ճառերից մի քանիսը մտքի խորությամբ ու ոճի գեղեցկությամբ ամենայն իրավամբ կարող են համարվել մեր հին ճարտասանական արվեստի փայլուն նմուշներ։

Եղիշեի գրքում բերված են նաև թագավորական հրովարտակներ, զանազան նամակներ, գրություններ, որոնց վավերականությունը ևս հաստատված չէ, բայց դրանք էլ լավագույնս հարաստում են դարաշրջանի ոգուն և որոշակի բազմագանություն են հաղորդում շարադրանքին՝ յուրովի նպաստելով պատմական իրողությունների ներքին զսպանակների բացահայտմանը, իրականության պատկերի ամբողջացմանը։

Եղիշեի լեզվին ու ոճին յուրատիպ գրավչություն ու սեղմություն են տալիս փոխառյալ կամ ինքնուրույն աֆորիզմներն ու թևավոր խոսքերը, որոնցից հիշենք՝ «Զուգութիւն է մայր բարեաց և անզուգութիւն ծնող չարեաց»։ «Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով»։ «Վաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»։ «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»։ «Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ»։

* * *

Հարյուրամյակներ անընդմեջ Եղիշեի անզուգական մատյանը եղել է հայ ժողովրդի ամենասիրելի ու տարածված գրվածքներից մեկը։ Այդ մասին են վկայում դարերի խորքից մեզ հասած նրա բազմաթիվ ձեռագիր ընդօրինակությունները, ինչպես և գրաբար բնագրի հրատարակությունները։ Մեզ հասած ամենահին ձեռագիրն ընդօրինակված է 1174 թ., Կոշավանքում, Դավիթ կրոնավորի ձեռքով։ Վարդանանց պատմության գրաբար բնագիրը առաջին անգամ լույս է տեսել Կոստանդնուպոլսում, 1764 թ. և մինչ օրս ունեցել է շուրջ 35 վերահրատարակություն։ Այդ երկը աշխարհաբար թարգմանվել է 6 անգամ, որոնցից լավագույնը, իհարկե, Երվանդ Տեր-Մինասյանի ձեռքով իրականացվածն է։ Նույն վաստակաշատ բանասերը կազմել է նաև Եղիշեի երկի գիտականքննական բնագիրը (1957 թ.)։

Եղիշեի երկը թարգմանվել է նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն։

Դարեր շարունակ «մեղվաշուրթն» Եղիշեի ոսկեղենիկ մատյանը առատ նյութ է տվել բազմաթիվ ու ամենատարբեր ժանրերի ու տեսակների գեղարվեստական ստեղծագործությունների։ Դեռևս միջին դարերում այն ներշնչանքի աղբյուր է եղել Ներսես Շնորհալու, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի, Գրիգոր Խլաթեցու և շատ ուրիշների համար։ Վարդանանց պատերազմի թեման կենտրոնական տեղ է գրավում նաև հետագա շրջանի հայ գրականության մեջ,

[24] Фукидид. История. Т. I, перевод Ф. Мищенка, в переработке, с примечаниями и вступительным очерком С. Жебелева. М., 1915, с. 16.

մասնավորապես XIX դարի հայ կլասիցիզմի ու ռոմանտիկական դրամատուրգիայի ստեղծագործություններում։ Սակայն վաղնջական ժամանակների հայոց պատմության հերոսական իրողությունը իր բացառիկ խոր պատմափիլիսոփայական ու գեղարվեստական հրաշալի անդրադարձումը գտավ մեր օրերում, Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» անմահ պատմավեպում, որի մեջ մեծ ընողը տաղանդի վիթխարի ուժով բացահայտեց հեռավոր անցյալի համահնչունությունը մեր օրերի հետ, պատմական ավանդների նշանակությունը մեր օրերի համար։

Եվ այսպես, հայոց հնադարի նշանավոր տարեգիրը, «Ավարայրի բլբուլը», հուսացոզներին հույս տվող, սիրելիներին մխիթարող, քաջերին քաջալերող Եղիշեն իր բովանդակալից ու ոգեշնչող մատյանով քայլեց ավերումի, փլուզումի, ցավալի կորուստների, բայց և հերոսական մաքառումի դարերի միջով՝ հասնելով մինչև մեր օրերը, պատմության բոլոր փուլերում մշտապես մնալով իր աղատաբաղձ ժողովրդի աննկուն ոգու, նրա նվիրական երազանքների ու ազնիվ ձգտումների հարազատ թարգմանը։

Ա՛յս է, ահա Եղիշեի ստեղծագործության մեծ խորհուրդը։

ЕГИШЕ

Член-корр. АН АрмССР В. С. НАЛБАНДЯН

Резюме

Статья посвящена одному из классиков армянской литературы V века—Егише (около 410/415—475/480 гг.). В его труде «О Вардане и Армянской войне», посвященном освободительному восстанию армян (451 г.) против персидского владычества, наиболее отчетливо проявились важнейшие особенности армянской литературы маштоцевской эпохи. Это произведение армянской древности характеризуется двоякой ценностью. Являясь достоверным историческим источником, оно в то же время—один из лучших памятников изящной словесности древнего периода, сыгравший огромную роль в зарождении армянской историографической мысли, в формировании устойчивых традиций жанра исторической прозы, в обработке и развитии национального художественного стиля. Особенно велика роль историко-литературного наследия Егише в деле разработки идеологии армянской национально-освободительной борьбы, в которой его сильное влияние сохранилось на протяжении всего средневековья вплоть до нового времени. Наряду с оценкой исторического значения, в статье подробно анализируются особенности поэтики сочинения Егише.